

Մերաբ Բարոխաղիա

**ԵՐԿՐՈՐԴ ԼԵԶՎԻ ՈՉ ԱՍՏԻՃԱՆԱԿԱՆ ԱՐԱԳ ՈՒՍՈՒՑՄԱՆ
ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԿԱՄԼԵԶՎԱԲԱՆԸ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԴԵՄ**

ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

Վերջին ժամանակներում եվրոպական երկրներում զարգացել է լեզուների ուսուցման մեթոդ, որը լայնորեն հաստատվում է աշխարհում, և որն ապահովում է արդիականության բոլոր չափանիշները և պահանջմունքները: Տվյալ հոդվածի նպատակն է հիշատակված մեթոդները հարմարեցնել վրացական իրականությանը և լեզուն՝ «կենդանի» վրաց լեզուն, արագ և արդյունավետ ուսուցման համար օգտագործել: Թեզիսների տեսքով առաջարկում ենք տվյալ հոդվածի համառոտ բնութագրիր՝ սովորենք արտահայտություններ և նախադասություններ, այլ ոչ թե բառեր (բառապաշարային նյութի համար), ոչ մի քերականություն՝ անընդհատ լսել (պարզից դեպի բարդը), ձգտում դեպի խորքը, այլ ոչ թե դեպի լայնքը: Աստիճանաբար, բազմանգամյա կրկնությամբ մտապահել լսածը: Լսել > ճիշտ հասկանալ > կրկնել > հասցնել ինքնաբերականության: Լսել մինի տեքստեր և սերտել, դատել նրանց մասին ներկայում, անցյալ անկատարում և կատարյալում (առանց քերականության) և փոխանցել երեք ժամանակներում և երկու դեմքում (նույնպես երեք ժամանակներում), տեքստը կարդալ ոչ թե դասագրքից, այլ տվյալ լեզվից լավ ընտրված գեղարվեստական գրականությունից, լսել ոչ թե արհեստական աուդիոնյութ, այլ ձայնագրություններ և աուդիոգրքեր՝ անպայման սովորողի համար հետաքրքիր թեմաներով ...

Օտար լեզվի ուսուցման (արագ ուսուցման) մեթոդիակայից գրվել են բազմաթիվ բարձրորակ դասագրքեր, որոնք հաճախ համապատասխանում են ժամանակակից չափորոշիչներին, թեպետ այս կամ այն չափով մշակել է անհրաժեշտ՝ տեքստերի ընտրության կամ պրակտիկ օգտագործման տեսանկյունից:

Դրա բանալին ուշադրության կենտրոնացումն է լեզվի գործնական կիրառության վրա: Տարիներ շարունակ ԹՊՀ-ում օտարալեզու ուսանողների և ներկայումս ադրբեջանալեզու ուսանողների հետ աշխատանքի հետևանքով բավականին մեծ փորձ ենք ձեռք բերել ...

Պետք է ասել, որ մի քանի տասնյակ տարիներ առաջ լույս տեսած քրեստոմատիաները և դասագրքերը համապատասխանաբար չեն պատասխանում օտարալեզու ուսանողների թե աշակերտների պահանջունքներին և անհրաժեշտություններին, քանի որ դրանք «ձևված էին» մայրենի լեզվի դասագրքերի ձևվածքով և հասկանալի է, որ բազմաթիվ թերություններ էին պարունակում այս տեսանկյունից: Ընդամենը մի քանի տարի է, ինչ այս հիմնախնդիրների վրա արդյունավետ աշխատանք է ընթանում և, համապատասխանաբար, լավ բնագիր թե քարգմանված մեթոդական և գործնական դասագրքեր են ստեղծվել: Կարծում ենք դրանց հետագա մեթոդաբանական կատարելագործում-զարգացումը կօգնի գործին, ինչ էլ նպատակադրում է մեր աշխատությունը:

Կաշխատենք թեզիսներով ձևակերպել մեր տեսակետները.

Թեզիս առաջին՝ քանի որ վրաց լեզուն հարուստ է նախածանցներով, որոնք յուրահատուկ և այլ լեզուներից բավականին տարբեր բառակապակցություններ են ստեղծում, օտարալեզու ուսանողներին բառարանը պետք է գրել տանք ոչ թե բառերի, այլ արտահայտությունների գրառումով: Օրինակ՝ սկսնակ ուսանողը գիտի հաշվել՝ մեկ, երկու, երեք, չորս և այլն: Հարցնում ենք՝ ինչի է հավասար մեկին գումարած մեկ և գումարած երկու: Առավելագույն դեպքերում պատասխանն այսպիսին՝ է մեկին գումարած մեկ և գումարած երկու հավասար է *օտե-օ* և ոչ մի դեպքում՝ *օտե-ե*: Քերականորեն ոչ արդյունավետ է բացատրել սա՝ լեզվի գործնական կիրառության տեսանկյունից, քանի որ քերականական կառուցվածքի հասկանալը և սերտելը դեռևս չի նշանակում նրա գործնական կիրառություն: Ավելին, այսպես սովորած նախադասությունը մոտորային խոսքի թշնամին է և կապակցված խոսքում նույնիսկ հիմնական խոչընդոտի է վերածվում երբեմն, քանի որ ուսանողը մտածում է *սահմանման* և ոչ թե արտահայտվելիք *բովանդակության* մասին:

Առաջին թեզիսի գլխավոր կանխադրույթն են **արտահայտությունները** (կամ նախադասությունները) և **ոչ թե բառերը**: Սովորեք արտահայտությունները և ուշադրություն մի դարձրեք բառերին (նույնն է, ինչ բառը համատեքստում): Արտահայտություններ սովորելիս սովորում եք նաև մի փոքր քերականություն: Չէ՞ որ քերականությունը լեզվական իրականությունից բխող սահմանումներն են: Այն սովորեցնում է, թե բառերն ինչպես ճիշտ դասավորենք կողք-կողքի: Օրինակ՝ գիտենք, որ „*օե*“-ը և „*մօօրտմեջե*“-ը միշտ միասին են: Օրինակ՝ „*օե* մօօրտմեջե ես չի կարելի բայի մեջ „*ե*“-ն բաց թողնել՝ „*օե* մօօրտմեջե ես չի կարելի“: Կրկնում ենք և կրկնում „*օե* մօօրտմեջե, *օե* մօօրտմեջե, *օե* մօօրտմեջե...“: Սա ճիշտ արտահայտություն է: Այս դեպքում մեզ անհրաժեշտ չէ իմանալ այն, թե սա անկատար ներկա է, թե կատարյալ, առաջին, թե երրորդ դեմք: Միայն պետք է իմանանք այն, թե ինչպիսի հաջորդականությամբ են նրանք միմյանց հետ դասավորված: Իսկ սա ինչպե՞ս եք կարողանում անել: Ամենակարճ և ամենաճիշտ ճանապարհն է **արտահայտությունները մտապահել բազմիցս կրկնելու միջոցով**: Այսպիսով, երբ կհայտնաբերեք նոր, ձեզ համար անծանոթ բառ, այն դուրս գրեք այդ բառի հետ և այնպես կազմեք բառարան: Կամ ամբողջությամբ նախադասությունը դուրս գրեք, կամ նրա մեջ եղած բառակապակցությունը և ոչ թե առանձին բառը:

Երբ կանդրադառնաք ձեր բառարանին, կրկնելիս կհամոզվեք արտահայտությունների և նախադասությունների առավելության մեջ: Բացի այդ, սա լեզու սովորելու ամենակարճ ուղին է, քանի որ դուք տիրապետում եք ոչ թե առանձին բառերի, այլ՝ բառերի խմբի:

Եթե բառերն առանձին-առանձին սովորեք, սա չի լինի բնական ուղի, քանի որ խոսելիս չեք կարողանա սահմանափակվել առանձին բառերով, այլ միայն բառերի խմբերով: Չէ՞ որ մենք արտահայտություններով ենք

խոսում: Չէ որ երեխաներն էլ ամբողջական նախադասություններ և բառերի շարքեր են լսում և այնպես են սկսում խոսել մայրենի լեզվով: Նրանց ոչ ոք առանձին բառեր չի սովորեցնում: Հենց սկզբից գիտեն, թե ինչ է նշանակում այս կամ այն արտահայտությունը և գուցե ոչ էլ գիտենան բառի նշանակությունը, սակայն ճիշտ են հասկանում արտահայտության նշանակությունը: Ավելի ուշ ավել արտահայտությունների են տիրապետում և հասկանում են առանձին բառերի իմաստները:

Սա անհամեմատ ավելի կարճ ուղի է առանձին բառերի տիրապետման համար և լավագույն ուղին արագ խոսելու համար: Երբ խոսելիս սկսում եք մտածել բառերի մասին, այդ ժամանակ ձեր խոսքը դանդաղում է և տվյալ լեզվով բնական չեք խոսում: Դրա լավ օրինակ է անգլերեն տեքստի ռոբոտ ընթերցողը: Չնայած նրան, որ նա ճշգրիտ կերպով է արտահայտում յուրաքանչյուր բառը, նրա կարդացած կապակցված խոսքը հեռու է բնական անգլերեն խոսքից: Դրա պատճառն է ոչ բնական դադարը բառերի միջև՝ իսկ չէ՞ որ այդպիսի դադարներ ոչ թե բառերի, այլ արտահայտությունների միջև կան:

Նոր նախադասություններ կարդալիս արտահայտություններն ամբողջությամբ պետք է դուրս գրեք: Երբ կանդրադառնանք դրանց կրկնությանը, դուք կրկին ամբողջ արտահայտությունները կկրկնեք և ոչ թե առանձին բառը: Տասն անգամ ավելի արագ կտիրապետեք լեզվին: Ամեն ինչ կշտկվի՝ ներառյալ ձեր քերականությունը:

Երկրորդ թեզիսն է՝ մի սովորեք քերականություն: Երկրորդ լեզվի (կամ օտար լեզվի) տիրապետման ժամանակ սա կարևորագույն օրենքն է: Սկսենք նրանից, որ խորհրդային դպրոցական համակարգը միասնականացված էր և տարիներ շարունակ (առնվազն 5-րդ կամ 3-րդ դասարանից) դասավանդվում էր օտար լեզու: Սովորում էինք բազմաթիվ տեքստեր՝ իրենց քերականությամբ, բառերով, և ի՞նչ, գալիս էր օտարեկրացին, և մենք չէինք կարող նրա հետ խոսել և հաղորդակցվել:

Չէինք կարող հասկացնել և չէինք հասկանում (էլ ի՞նչ է օտար լեզվի իմացությունը), կամ դպրոցը չէր կարողանում կատարել գլխավոր խնդիրը և անհրաժեշտ էին դառնում դասուսուցիչներ և տարիներ շարունակ անհատական աշխատանք: Նույն կերպ շարունակվում էր նաև բարձրագույն ուսումնական հաստատությունում, և արդյունքը նույնպիսին էր: Այնքան աշխատանքը և էներգիան և որ ամենակարևորն է՝ ժամանակը ջրի մեջ էր լցված:

Այստեղ պետք է խոստովանենք ինքներս մեզ և հարցնենք՝ կարող եք արդյոք ձեր ցանկացած լեզվով (անգլերեն, վրացերեն և այլն) խոսել կապակցված և արագ, հեշտ և ինքնաբերաբար: Եթե ոչ, ինչո՞ւ: Չէ՞ որ դուք այսպես ուզում եք տիրապետել լեզվին: Պատասխանը մեկն է՝ ոչ ճիշտ ճանապարհով էիք գնում և այնպես էիք տիրապետում նրան: Կհանգստացնեմ ձեզ: Սա միայն ձեզ չի վերաբերում: Իսկ ի՞նչ է կատարվում:

Հենց քերականության վրա արված չափից ավելի շեշտադրումն է բերել մեզ այս հետևանքին: Անընդհատ քերականական սահմանումներ սովորելը մեզ այսպիսի արդյունքի է բերել: Ուսուցիչների ցուցումները և հանձնարարությունն այսպիսին է եղել՝ քերականական կանոնները լավ պետք է սովորեիք: Դուք էլ ստիպված էիք դրա վրա շատ ժամանակ ծախսել և ձեր ժամանակը հատկացնել այս կանոններով ծանրաբեռնված դասազբերին: Սա ունի նաև երկրորդ վատ հետևանքը: Մարդկանց մեծ մասն այսօր էլ է հավատում քերականական կանոնների մեծ նշանակությանը երկրորդ լեզվի ուսուցման մեջ:

Ինչո՞ւ չպետք է սովորենք քերականություն: Բազմաթիվ աշխատություններ են նվիրվել նրան, որ քերականության ուսուցումն իրականում նվազեցնում է ձեր խոսողական հմտությունները: Սկսում եք տվյալ լեզվով խոսել և և այն քերականական կանոնների մասին եք մտածում, որով լի են ձեր գլուխները: Փոխանակ փորձեք ինքնաբերաբար սկսել խոսել, աշխատում եք հիշել քերականական կանոնները:

Սա արդեն ինքնաբերական խոսք չէ: Սա է հիմնական պատճառներից մեկը, որ չեք կարողանում ինքնաբերաբար խոսել: Ոչ հեշտ եք խոսում, ոչ էլ ինքնաբերաբար:

Գրելու դեպքում բավական ժամանակ ունեք մտածելու, կարող եք դանդաղ կամ անչափ դանդաղ գրել, տարբեր կերպ ուղղել սխալները՝ ինքներդ ուղղել ձեր սխալները, գրքի օգուտթյամբ, ուսուցչի կամ ընկերոջ, սակայն խոսելիս, ինչպես զիտեք, այսքան ժամանակ չունեք: Եթե որևէ մեկը հարց է տալիս, նա անհապաղորեն պատասխանի է սպասում: Նրա հետ խոսելիս՝ պետք է համոզված լինեք ձեր պատասխանի ճշտության մեջ:

Ուրեմն, ինչպե՞ս սովորենք քերականորեն կապակցված խոսել: Այստեղ ելքը լսելու մեջ է: Երբ լսում եք, կռահում եք, թե ճի՞շտ է արդյոք խոսքը և չեք մտածում, թե որ ժամանակում է դրված այս կամ այն նախադասությունը: Լսում եք միայն այն, թե ինչպե՞ս է հնչում այս նախադասությունը, ինչպես է ճիշտ արտասանվում և, երբ կսկսեք խոսել, կօգտագործեք ճիշտ քերականական ձևը: Սա միակ ուղին է արագ, հեշտ և արդյունավետ խոսելու համար:

Երրորդ թեզիս՝ ամենակարևորն է **լսելը**: Անսահման քանակությամբ լսելը անչափ կարևոր է և, միևնույն ժամանակ, նաև լեզվի արդյունավետ տիրապետման ամենահեշտ ուղին: Տվյալ թեզիսների ցանկում առաջին տեղը կշնորհեի ունկնդրմանը: Ռուսերենին մենք ոչ թե դպրոցում, այլ բակերում խաղալիս, կինոթատրոններում, ռադիոյի և տեղեկատվական միջոցներով էինք տիրապետում, չնայած նրան, որ դպրոցում նրա ուսուցումը լավ մակարդակի վրա էր գտնվում:

Լեզուն սովորիքի ականջով և ոչ թե աչքով: Երբ դասագրքից եք սովորում, տիրապետում եք քերականական սահմանումների: Համապատասխանաբար, ավելի շատ քերականական կանոն կգիտենամ, քան ինքը, օրինակ անգլիացին: Անգլալեզու անձն այս կանոնները գուցե ոչ էլ լսում է: Նա ուղղակի բնականաբար խոսում է: Ուրեմն, խոսելիս ոչ որ չի մտածում քերականական սահմանումների

մասին, քանի որ սրա համար ժամանակ էլ չի մնում:

Քերականական սահմանումները հաճախ գրքի մի քանի էջ են ընդգրկում: Խոսելիս նրանց մասին մտածելը մեզ շատ հեռու կտանի, և սա խոչընդոտ էլ կլինի: Ուրեմն, քերականական սահմանումներն ուղղակի չեն աշխատում: Իսկ ի՞նչն է աշխատում: Լսելը և լսելը, մինչև այն չհեշտանա և չբարձրանա ինքնաբերական մակարդակի: Սա շատ հզոր մեթոդ է, ահա թե ինչպես են երեխաները տիրապետում լեզվի՝ **լսելով**: Երկու տարի և լսելով սկսում են խոսել:

Շատերին զայրացնում է այն, որ օտար լեզվով ճիշտ չեն խոսում: Սակայն լավ խոսելը գալիս է լավ լսելուց: Անհրաժեշտ է չորսից վեց ամիս լսել, միայն լսելու վրա կենտրոնանալ և հոգ մի տարեք խոսելու մասին: Դուք կկարողանաք այն, սակայն մի ստիպեք ինքներդ ձեզ: Ոչինչ, եթե սխալներ եք թույլ տալիս: Վեց ամիս լսեք և լսեք: Եթե ավելի շատ լսեք, ավելի լավ:

Լսելիս երկու կարևորագույն բան պետք է հիշենք: Առաջինն է, թե ինչպես ենք լսում, պետք է համոզվենք, որ սա պարզ լեզու է: Նվազագույն բարդության: Շատ եք ցանկանում նրա առավելագույնը հասկանալ: Մի խոսքով, եթե տեսնեք, որ ունկնդրման նյութն անհասկանալի է, թողեք և փնտրեք պարզը: Երկրորդ՝ լսեք անսահմանորեն, ժամանակի մեջ անսահման:

Չորրորդ թեզիսն է՝ խորը սովորել: Այս լեզուն վերածիր քո մի մասի: Սա ինքնաբերաբար խոսելու բանալիներից մեկն է: Ինքնաբերական խոսք ասելով, նկատի ունենք առանց մտածելու խոսելը: Ոչ մի թարգմանություն գլխի մեջ, ոչ մի քերականական սահմանում: Միայն խոսեք: Մի մտածիր, մի ջանա, այնպես, ինչպես մայրենի լեզվով խոսելիս քեզ անհրաժեշտ չէ ջանք գործադրել: Այստեղ չես զգում դժվարությունը: Այն անչափ հեշտ է: Ուզո՞ւմ ես ասել որևէ բան, ասա: Մի մտածիր: Ողջ խնդիրը դպրոցի և դպրոցական դասագրքերի մեջ է, քանի որ հակառակն էին սովորեցնում ամեն ինչ: Դասագրքերից շատ բան էիք սովորում սահմանումների հետ, բազմաթիվ բառարանային բառեր և քերականական սահմանումներ: Դրանք

բավական արագ էլ յուրացրիք, իսկ այժմ ոչ էլ լավ հիշում եք: Կարող եք նույնիսկ ասել, որ լավ գիտեք քերականությունը: Կարող եք ասել, որ լավ եք տիրապետում այս բառերին, սակայն գիտե՞ք արդյոք դրանք իրականում: Քանի որ, երբ ասում եմ **գիտեմ**, նկատի ունեմ նաև այն, որ այս գիտելիքը կարող եմ արագ, հեշտ և ինքնաբերաբար **կիրառել**: Առանց մտածելու կարո՞ղ եք օտար լեզվի քերականությունն օգտագործել: Այնպես լավ գիտե՞ք բառերը, որ ինքնաբերաբար խոսեք: Կրկին և կրկին, ոչ մի մտածել, թարգմանել, դադար խոսելիս, ոչ մի տարօրինակ հապաղումներ:

Այսպիսով, այս հիմնախնդիրներն ունեք, և այդ այդպես էլ պետք է լինի, չէ՞ որ դուք դպրոցում էիք սովորում (և բարձրագույնում ևս): Ինչ լավ էիք տիրապետում դասագրքերին և մտածում էիք՝ ինչ արագ եմ սովորում, հոյակապ է, և տրվում էիք կեզծ ինքնագոհունակությանը: Խնդիրն այն է, որ խորը չէիք սովորում և սա իրական ուսանում չէր: Թեստերը և քննություններն էլ էիք հոյակապ հանձնում, սակայն օտարալեզուների հետ խոսելիս ոչ մի բան չէիք կարողանում անել, կամ, ծայրահեղ դեպքում, սարսափելի հնչերանգով և թույլ:

Այսպիսով, ինքնաբերական խոսել է անհրաժեշտ ձեռք: Ինչպե՞ս սովորենք խորը: Սա հեշտ է, սակայն հզոր միջոց է: Խորը սովորելը բազմանգամյա, անսահման քանակությամբ կրկնություն է ենթադրում: Կարծում ենք մեկ դասը մեկ շաբաթ պետք է շարունակվի: Նրանում պետք է 50 բառ լինի: Կտրվի մեկ գրույց կամ մաս (տրված բառերի քանակի նախատեսմամբ՝ չպետք է գերազանցի 50-ը): Այնուհետև կտրվի մինի-պատմվածք/տեքստ: Նրանում ևս կրկնում եք նույն բառերը և արտահայտությունները: Այնուհետև տրվում է բառարանային բաժինը, որտեղ նույն բառերը և արտահայտությունները կրկնում եք նորից, կրկնում և կրկնում: Ոչ էլ կձանձրանաք, քանի որ միևնույն բառը տարբեր իրավիճակներում կլսեք, տարբեր կերպ և տարբեր համատեքստերում: Այդ պատճառով էլ անհրաժեշտ է կանոնավոր կերպով կրկնել: Նոր բառ-արտահայտությունն առնվազն 30 անգամ

գոնե պետք է լսեք և հասկանաք, որ մտապահեք, խորը ուսումնասիրեք և ինքաբերաբար կիրառեք խոսքում: Առաջին հերթին նկատի ունենք նրանց լսելը և ճիշտ հասկանալը: Եվ սա պետք է շարունակվի այնքան ժամանակ, մինչև չխորանա մինչև վերջ և չանցնի ինքնաբերական օգտագործման: Սա միայն լսել չէ: Սա խորքային ունկնդրում է, կրկին և կրկին, նորից և նորից ունկնդրում: 20 անգամ լսելուց հետո կկարծեք, որ ոչինչ տեղի չի ունենում, հասկացա, սակայն ամեն ինչ նույնն է: Սա այն պատճառով, որ խորքային ունկնդրում է անհրաժեշտ: Կարծես սկզբից ոչինչ տեղի չի ունենում, սակայն հանկարծ պայթյուն, և բառերն ինքնաբերաբար կգան .. Չարմանալի զգացում է: Սա հենց այն է, որ ձեզ անհրաժեշտ էր:

Ուրեմն խորը սովորեք և կրկնեք: Այն ինչ կլսեք, կրկնեք և կրկնեք: Ամեն օր յոթ անգամ և նույնիսկ ավելի:

Հինգերորդ թեզիսը կապվում է երկրորդ թեզիսի հետ: Հիշո՞ւմ եք, ասում էի, թե քերականություն անհրաժեշտ չէ:

Ինչո՞վ փոխարինենք այն, որ ճիշտ խոսենք: Սա մինի-տեքստի/պատմվածքի մասին տեսակետ է: Միայն շատ փոքր չափսի հեշտ պատմվածք: Մենք տարբեր կարծիքներ պետք է լսենք այս տեքստի մասին: Չորս-հինգ նախադասությունից բաղկացած տեքստը բազմիցս պետք է լսեք և համոզվեք, որ դուք այն հասկանում եք: Տեքստը ներկայացված է ներկայում: Առաջինը որ կանենք, այն կտեղափոխենք անցյալ ժամանակ: Այս տարբերակը ևս լավ կհասկանանք, շատ կլսենք և անչափ շատ կկրկնենք: Սա գործնական քերականություն է՝ առանց սահմանումների և տեսության է տրվում ձեռք: Ձեզ անհրաժեշտ է միայն այն, որ լսեք, հասկանաք տարբերությունը նրանց միջև և կրկնեք և կրկնեք: Այժմ արդեն անցնում ենք մեկ տարի հետո կատարվելիք իրադարձություններին (սպառնի ժամանակ): Սա արդեն երրորդ ժամանակն է: Կրկնում եք երեք տարբերակները: Ակնհայտորեն կտեսնեք, թե ինչպես է փոխվում այն պատմվածքի յուրաքանչյուր տարբերակը:

Այնուհետև տեղափոխենք տարբեր դեմքեր և ցույց տանք, թե որքանով է փոխվում միևնույն տեքստը ըստ դեմքերի տարբեր կերպ: Լսում և լսում եք, մինչև հասկանաք այն: Ոչ մի դեպքում չմտածեք, թե որ դեմքում է և որ ժամանակում: Ուղղակի լսեք և կրկնեք տեքստը հասկանալի: Քերականական կանոնները սովորում եք ինքնաբերաբար՝ առանց նրանց սերտման: Միևնույն ժամանակ կհամոզվեք, որ ազատ խոսում եք:

Վեցերորդ թեզիսը կվերաբերի իրական նյութի կիրառությանը: Արդեն նշեցինք, որ պետք է վերջ տաք դասագրքերի արհեստական տեքստերի օգտագործմանը ... Ի՞նչ նկատի ունենք իրական նյութի օգտագործում ասելով: Սա մայրենի լեզվով խոսող անձն է և այն, ինչ նա կիրառում է ռեալ խոսքում: Օրինակ՝ լավ է եթե շատ կարդաք ուսումնասիրվելիք լեզվով, սակայն մի ընթերցեք դասագրքերի տեքստերը: Համոզվեք, որ այն հեշտ է ընթերցման համար և ուսումնասիրվելիք լեզվով է գրված, բնագիր է: Սակայն ընտրեք այն, ինչը ձեզ հետաքրքիր է: Նաև չլսեք այն մարդկանց, որոնք իրական իրավիճակ, երկխոսություն են խաղում, քանի որ սա նորմալ, իրական լեզու չէ: Լսեք միայն բնական խոսող մարդկանց, միևնույն ժամանակ ձեզ հետաքրքիր թեմաներով: Աուդիոգրքերը ևս հոյակապ ուղի են իրական լեզվի ունկնդրման համար, միայն թե ունկնդրում եք գիրքը: Կրկին ձեզ հետաքրքրող թեմաներով: Կրկին և կրկին այնքան հեշտ պետք է լինի, որ պետք է հասկանաք համարյա հարյուր տոկոսով: Լսելը պետք է հաճույք պատճառի: Եթե սկսեք մանկական աուդիոգրքերի ունկնդրմամբ, դա ամենից լավ կլինի: Այստեղ ևս պետք է լինեք համոզված, որ հասկանում եք համարյա հարյուր տոկոսով: Լսեք և լսեք անսահմանորեն, մինչև առաջ չանցնեք և անցեք պատանեկան գրականության ունկնդրման: Նույն կերպ լսեք և լսեք անսահմանորեն, այնքան ժամանակ, մինչև բավական հեշտ չլինի ձեզ համար և անցեք ավելի բարդ մակարդակի: Արդեն ականջն ընտելանալուց հետո կարող եք լսել լուրեր,

հեռուստատեսային և ռադիոհաղորդումներ, դիտել և լսել ֆիլմեր, շոուներ:

Հենց ռեալ, կենդանի նյութով կտիրապետեք կենդանի լեզվին: Դասագրքերը քեզ տալիս են պաշտոնական լեզուն և հիմնականում հազիվ թե գրել սովորեցնեն: Դասագրքերում տրված բառապաշարը և ոճը միայն հազիվ թե գրավոր լեզուն սովորեցնեն: Երբ լսում եք կենդանի լեզուն և սովորում եք այն, դուք տիրապետում եք այն լեզվին, որն ամենօրյա կյանքում, նորմալ գրույցի ժամանակ ենք կիրառում: Սա հենց այն է, ինչպիսինով խոսում ենք կամ կիրառում ենք բառեր: Սրանք ռեալ արտահայտություններ են:

Այսպիսով, հիշենք, որ միայն ռեալ նյութը և ոչ թե դասագրքերը և ձայնապնակների կամ CD սկավառակների վրա տեղադրված արհեստական ունկնդրման նյութն է ձեզ պետք: Սա գվարճալի կանոն է, որը ձեզ կազատի ձանձարալի գործունեությունից և այնպիսի նյութ ընտրել կտա, որը հետաքրքրում է ձեզ: Խոստովանենք, որ դասագրքերը հետաքրքիր չեն: Ավելին, որպես օրենք, ձանձարալի են: Ուրեմն, գտեք իրական ունկնդրման և իրական ընթերցանության նյութ, որը հետաքրքրում է ձեզ և անպայման ձեր մակարդակին համապատասխան, որ հասկանաք:

Յոթերորդ թեզիսը լսածի և նրա շուրջ առաջադրված հարցերին պատասխաններ տալու մասին է: Մտածո՞ւմ եք իրական խոսքի մասին, ի՞նչ է տեղի ունենում իրական գրույցի մեջ: Իրականում նրանում բազմաթիվ հարցեր և պատասխաններ են տրված: Հազվադեպ է լինում, որ մեկ անձը խոսի և մյուսը միայն լսի: Սովորաբար այսպիսի խոսքը շփվելու համար է՝ մեկը հարցեր է առաջադրում, մյուսն իմաստավորում է այն և պատասխանում և այսպես շարունակ, հարց-պատասխանի ռեժիմում: Ջրույց, հարց, պատասխան, ահա իրական գրույցը, որ մշտապես տեղի է ունենում: Միևնույն ժամանակ, երբ ականջը լսում է, գիտակցությունը սթափվում է, կենդանանում, քանի որ հարցը պասսիվ չէ: Երբ հարց եք լսում, ինչ որ բան պետք է անեք: Մտածողությամբ

տրված լեզվով եք մտածում, հասկանում և պատասխանն էլ տրված լեզվով եք տալիս: Մա անչափ կարևոր է նրա համար, որ հասկանանք, որ լեզվական գործունեությունը անչափ ակտիվ գործընթաց է: Համապատասխանաբար, այսպիսի ակտիվ ճանապարհով պետք է սովորենք մաս օտար լեզուն: Ձեր գիտակցությունն անհամեմատ ավելի արագ է աշխատում և անհամեմատ արագ էլ սովորում եք, երբ շատ հարցեր եք կիրառում: Իսկ սրա համար կիրառում ենք այս պատմվածքները: Լսելով, ինչպես նշեցինք, պետք է լսեք և լսեք, սակայն այժմ մի փոքր տարբեր բան ենք անում: Լսում ենք և պատմվածքների շուրջ առաջադրված հարցերին պատասխաններ ենք տալիս: Մենք հարցեր ենք առաջադրում տեքստի շուրջ: Անչափ շատ հարցեր, հարցեր և հարցեր: Մա նրա համար, որ ուսումնասիրվող լեզվով մտածեք: Այս հարցերով հենց այդ կտվորեք: Սրանով կտվորեք անընդհատ և արագ մտածել այս լեզվով:

Առաջինը, որ կարվի, հարցերի առաջադրումը շատ հեշտ կլինի: Մա ևս անչափ կարևոր է: Եթե այսպես չանենք և բարդ հարցեր առաջադրենք, շատ էլ կմտածեք, և սա շատ կերկարաձգվի ժամանակի մեջ: Անչափ դանդաղ կլինի, դուք դանդաղ կմտածեք: Հնարավոր է մայրենի լեզվի էլ անցնեք և այնպես թարգմանեք և մտածեք պատասխանները: Այդ պատճառով այս պատմվածքների շուրջ կառաջադրենք բազմաթիվ հարցեր, թեպետ շատ, շատ հեշտ հարցեր: Այնքանով հեշտ, որ անհապաղորեն հասկանաք և ձեր պատասխանն էլ շատ արագ կլինի: Արագությունը անչափ նշանակալի բաղադրամասն է այս պատմվածքների: Պատասխանելիս մեկ կամ երկու բառ եք օգտագործում: Սրանք ամենակարճ պատասխաններն են: Անհրաժեշտ չէ մեծ նախադասություններով պատասխանել: Անհրաժեշտ չի լինի մտածել քերականության մասին: Ընդհանրապես, ոչ էլ որևէ այլ բանի մասին կմտածեք: Ձեր գիտակցությունը կրնտելացնեք երկրորդ/օտար լեզվով շատ արագ

հասկանալուն և համապատասխանաբար կտաք պատասխանը: Կհասկանաք շատ արագ և շատ արագ էլ կպատասխանեք: Այդ պատճառով էլ կրնտելանաք այս առանձնահատուկ տեքստերին՝ հարց-պատասխանի կարգով:

Կրկնում եմ, հարցերը շատ կարճ պատասխաններ պետք է պահանջեն սկզբից: Մա պարզագույն տեխնիկա է, սակայն անչափ արդյունավետ: Առանձնապես այն ժամանակ, թե մի քանի անգամ կկիրառեք այն: Չարմանալի արդյունքներ է բերում: Աստիճանաբար ձեր խոսքը կարագանա և կսկսեք մտածել այս լեզվով: Մի գեղեցիկ օր կհայտնաբերեք, որ արագ հասկանում եք և ուղղակի խոսում եք այս լեզվով: Ոչ մտածում եք, ոչ էլ թարգմանում: Լսում եք և խոսում, զարմանալի զգացում է տիրում ձեզ:

Ինչպե՞ս կազմենք այսպիսի պատմություն կամ լուր: Ուսումնասիրվելիք լեզվով խոսողի խոսեցնենք և ձայնագրիչով ձայնագրենք: Միշտ լսենք: Ամեն անգամ լսում եք հարցը, և դուք պատասխանում: Անչափ հեշտ և միևնույն ժամանակ արդյունավետ:

Մեր ուսուցման մեթոդը և դասերը միայն իրական լեզվի ուսանումը կլինի, միայն համատեքստով և այս թեզիսների վրա հիմնվելով: Իհարկե, առաջադրված դասերում ի մի բերված և կարգավորված կլինի ամեն ինչ, որ ասվել է վերևում ... բոլոր դասերը կունենան պատմվածքներ հարց-պատասխանով, բոլորը քերականական հաջորդականությամբ, առանց քերականական սահմանումների: Բոլորը կունենան բառարանային մաս, առանց բառերի, արտահայտություններով փոխանցված: Նրանցից յուրաքանչյուրը կունենա աուդիո, ունկնդրվելիք նյութ իրական խոսքից, որը կլսենք և կլսենք ...

ABSTRACT*Merab Babukhadia***Features of Fast Methodological Teaching of Foreign Language
(Why do you need the unusable covered treasure?
Or a Linguist Against of Grammar Teaching)**

Will not be the original in our method, which was widely established in the world and satisfied all the modern needs and meet standards. We try to use them only in the modern Georgian language, in the study of Georgian language real quick and effective. This thesis is established in the form: learn phrases and suggestions, not words (for dictionary material) any grammar, reading constantly (from simple to complex) in this study eighty percent of thesis is given, to the depth and width, not to aspiration. Slow - by slowly recurring refrain heard multiple Remember. Repeat 50-100 - yet. Hearing> understanding> repeat>to automatically speech; mini - texts reading and learning; discussion on them in the present, past, and who (in the grammar without the tell) and all three persons and transmission the number (as well as the three time); text's question is not a textbook, but given from real texts of this language literature, not reading the text C-Ds, but the podcast, you will listen to audio-books interesting topics - just listen! But only big part of listening material should understand that it will make interesting and attractive. After moving to a youth age, and more advanced (the only real texts). After radio and movies, the question around text and answers from easy to